ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

20-ը դեկտեմբերի 2019թ. ք. Գյումրի

ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2019 թվականին կատարված աշխատանքների մասին

Զեկուցող ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյան

ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում 2019թ. ընթացքում պետական բյուջեի միջոցներով և այլ ֆինանսական աղբյուրներով իրականացվել են շուրջ **26,745** մլրդ դրամ գումարի կապիտալ ներդրումներ (2018-ին՝ 20.18 մլրդ) (աղյուսակը կցվում է), այդ թվում՝

Ուղղություն	**2018 մլրդ դրամ**	**2019 մլրդ դրամ**
Բնակապահովում	0.083	0.144
Կրթական օբյեկտների շինարարություն	0.520	1.117
Առողջապահական, մշակութային և սպորտային օբյեկտներ	0.342	0.4
Ջրամատակարարում և ոռոգում	3.44	0.098
Ճանապարհաշինություն	11.64	12.8
Գազամատակարարում և էլեկտրամատակարարում	0.542	0.722
Այլ օբյեկտներ	1.613	8.464
Մասնավոր ներդրումներ	2.0	3.0
Ընդամենը	20.18	26.745

Կրթական օբյեկտների շինարարություն

ՀՀ կառավարության 29.09.2018թ. № 1073-Ն որոշման շրջանակում, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ ՀՀ Շիրակի մարզի թվով 12 կրթական հաստատություններում իրականացվել են վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ: ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ընթացքի մեջ է 1 դպրոցի հիմնանորոգման աշխատանքները, ևս 1 դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

մշակման գործընթացը ավարտվել է, իսկ շինարարական աշխատանքները կիրականացվեն 2020թ.-ին: Մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակում կառուցվել է մեկ, հիմնանորոգվել և վերանորոգվել են թվով 6 մանկապարտեզներ: Սիմոնյան կրթական հիմնադրամի պատվիրատվությամբ շարունակվել են Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի վերակառուցման աշխատանքները:

Մշակութային և սպորտային օբյեկտների շինարարություն

Մարզի 12 բնակավայրերում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի պատվիրատվությամբ իրականացվել են ֆուտբոլի դաշտերի կառուցման աշխատանքներ՝ 224.40 մլն դրամ գումարով: Սուբվենցիոն ծրագրով իրականացվել են Անուշավան համայնքում ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքները:

Առողջապահական օբյեկտների շինարարություն

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ իրականացվել են մարզում թվով 3 բժշկական կենտրոնների վերանորոգման աշխատանքներ:

Ջրամատակարարում և ոռոգում

2020 թվականին կիրականացվի Գերմանիայի KFW Բանկի, Եվրոպական Ներդրումային Բանկի և Եվրամիություն/ՀՆԾ կողմից ֆինանսավորվող «Համայնքային Ենթակառուցվածքի Ծրագիր II» 3-րդ փուլի շրջանակներում թվով 13 բնակավայրերում ջրամատակարարման ցանցի վերանորոգման աշխատանքները: Ներկայումս ընթանում են կապալառու կազմակերպության ընտրության մրցույթները: Սուբվենցիոն ծրագրերի շրջանակում իրականացվել է թվով 6 բնակավայրերի ոռոգման և ջրահեռացման ցանցերի վերանորոգում: 2019թ.-ին շարունակվել են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Կապսի ջրամբարի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքնեը: Շինարարական աշխատանքները կսկսվեն 2020թ-ին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պատվիրատվությամբ իրականացվում են Գյումրու հյուսիսային մաքսատան կառուցման աշխատանքները՝ 6.0 մլրդ դրամ գումարով:

2019 թվականին մասնավոր ներդրումները ՀՀ Շիրակի մարզում կազմել են շուրջ 3.0 մլրդ դրամ: Մարզում իրականացվել է 2.313 մլրդ դրամ արժեքով (պետական բյուջեից՝ 1.2225 մլրդ. դրամ, համայնք՝ 1.0905 մլրդ դրամ) թվով 49 սուբվենցիոն ծրագիր:

Քաղաքաշինության վարչության կողմից իրականացվել են թվով 107 քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքներում ներկայացված հողահատկացումների և նախագծային առաջարկությունների համաձայնեցումների գործընթացներ, թվով 12 նախագծային առաջարկություններ գտնվում են համաձայնեցման փուլում: ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից համաձայնեցվել է թվով 15 նախագծային առաջարկություն: Գյումրի քաղաքում և մարզի այլ բնակավայրերում կատարվել են թվով 7 օրենսդրությանը հակասող, ինքնակամ շինարարության կանխման, կասեցման գործընթացներ:

Բնակարանային ապահովում

ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում հաշվառված զոհված (մահացած) զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների համար 2019թ. նախատեսված ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում թվով 17 ընտանիքների տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր, 13-ի բնակարանային գործերը դեռևս գտնվում են քննարկման փուլում: ՀՀ կառավարության 08.08.2019թ. N1024-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի 4 գյուղական բնակավայրերում (Ախուրյան, Գետք, Քեթի և Հացիկ) երկրաշարժից անօթևան մնացած և բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված թվով 15 ընտանիքների համար իրականացվել է բնակարանի գնման վկայագրի կամ անհատույց ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագիր, որի շրջանակներում արդեն իսկ բնակարան են ձեռք բերել թվով 9 ընտանիքներ, ևս 1-ը ստացել է ֆինանսական աջակցություն՝

կիսակառույցի ավարտման համար: ՀՀ կառավարության 14.11.2019թ. N1610-Ն որոշման համաձայն ՀՀ Շիրակի մարզի թվով 9 գյուղական բնակավայրերում (Բասեն, Սառնաղբյուր, Ջաջուռ, Կամո, Մայիսյան, Շիրակ, Գուսանագյուղ, Մարմաշեն, Ջրաձոր) երկրաշարժից անօթևան մնացած և բնակապահովման ծրագրի շահառու ճանաչված թվով 90 ընտանիքների համար մեկնարկել է ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագիրը:

ՀՀ կառավարության 29.03.2018թ. N361 և ՀՀ վարչապետի 20.12.2018թ. N1658-Ա որոշումների համաձայն ՀՀ Շիրակի մարզի քաղաքային և գյուղական բնակավայրերում իրականացվել է պետական, համայնքային, ինչպես նաև այլ անձանց սեփականությունը հանդիսացող տարածքներում տեղակայված ոչ հիմնական շինությունների փաստագրման գործընթաց: Նշված գործընթացի շրջանակներում փաստագրվել են թվով 3545 ժամանակավոր կացարաններ, որից Գյումրի քաղաքում՝ 2858, Արթիկ քաղաքում՝ 6 և թվով 20 գյուղական բնակավայրերում՝ 681 (ևս 164 փայտյա բնակելի տներ Աշոցք համայնքի Կոճոռ թաղամասում):

ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների կողմից հաստատված ոչ հիմնական շինությունների փաստագրման աղյուսակային և գրաֆիկական նյութերը ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան գրություններով ուղարկվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ հանձնաժողովի քննարկմանը:

ՀՀ Շիրակի մարզի 2019թ. ճանապարհաշինական աշխատանքների ընթացքի վերաբերյալ

2019 թվականին մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազմել է 12,8 միլիարդ ՀՀ դրամ: Ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը հատկացվել էր շուրջ 615.0 մլն. դրամ, իսկ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 183.965 մլն. դրամ գումար: Իրականացվել են թվով 7 միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքներ: Ընդհանուրը 3,0 միլիարդ դրամ գումարով շուրջ 35,85 կմ երկարությամբ: 2019 թվականին շարունակվում են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 3-ի Լանջիկ-Գյումրի 27,5 կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները: Մարզի 10 համայնքներում (Գյումրի, Ազատան, Նոր Կյանք, Լուսակերտ, Անի, Պեմզաշեն, Փանիկ, Գետք, Մեծ Մանթաշ և Հոռոմ) ճանապարհաշինության ոլորտում իրականացվել են սուբվենցիոն ծրագրեր ընդհանուր 743.9 մլն. դրամ, գումարով, որից 409.05 մլն. դրամ գումարը կհատկացվի ՀՀ պետական բյուջեից, իսկ 334.85 մլն. դրամ գումարը՝ համայնքային բյուջեներից:

Գյումրի քաղաքում իրականացվող ճանապարհաշինական աշխատանքներ

2019 թվականին իրականացվել են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի ֆինանսավորմամբ Գյումրի քաղաքի թվով 12 փողոցների շուրջ 11.2 կմ երկարությամբ և թվով 2 հրապարակների վերակառուցման աշխատանքները՝ 7.5 մլն. եվրո ընդհանուր արժողությամբ: 2019 թվականին շարունակվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, իրականացվող թվով 5 փողոցների շուրջ 1.8 կմ երկարությամբ և 2 հրապարակների հիմնանորոգման աշխատանքները՝ 995 մլն. դրամ գումարով:

Գյումրի քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների համար համայնքային բյուջեից հատկացվել է 141.0 մլն. դրամ գումար:

ՀՀ Շիրակի մարզի 2019թ. տրանսպորտի ոլորտի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեվորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կողմից թվով 12 ներմարզային երթուղիների սպասարկման ժամկետները երկարացվել են:

Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանց ստեղծելու նպատակով նախկին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ համատեղ մշակվել է ՀՀ Շիրակի մարզի նոր երթուղային ցանցը: Երթուղային ցանցում ընդգրկված են թվով 35 ավտոբուսային երթուղիներ, որոնք ընդգրկում են մարզի բոլոր բնակավայրերը:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հ. Կարապետյան

Կրթություն

• ՀՀ Շիրակի մարզում գործում են 162 հանրակրթական դպրոցներ, որոնցից 146-ը մարզային ենթակայության, այդ թվում 3-տարրական, 41-ը՝ հիմնական, 101-ը միջնակարգ, 1-ը՝ երեկոյան, 12-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության, որից 2-ը՝ վարժարան, 1-ը՝ միջնակարգ, 7-ավագ, 2 ավագ դպրոց ձևավորվել և գործում են որպես Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի և Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային ավագ դրոցներ:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1098 - Ա և N 1116 – Ա որոշումներով ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Արթիկի թիվ 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ները վերակազմավորվեցին և ձևավորվեցին տարածքային մակարդակում երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպություն:

• 2019 թվականի խոշորագույն քայլը, որն իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի կրթության ոլորտում, դա Համընդհանուր ներառական կրթություն ծրագրի մեկնարկն է, որի համար իրականացվել են բազում միջոցառումներ.

2019 թվականի սեպտեմբեր ամսից ՀՀ Շիրակի մարզում մեկնարկել է Համընդհանուր ներառական կրթություն ծրագիրը: 2019 թվականի օգոստոսից սեպտեմբեր ամսներին՝ «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աջակցությամբ, ՀՀ Շիրակի մարզի դպրոցներում անցկացվել է համընդհանուր ներառական կրթության ծրագրի իրականացման վերապատրաստումներ: Վերապատրաստումներին մասնակցել են 150 տնօրեններ և շուրջ 600 ուսուցիչներ:

• Արթիկի մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնի կողմից գնահատվել են 282 աշակերտ՝ 66 դպրոցից, աշակերտներից 100-ը արդեն իսկ ունեն վկայագրեր,

գործընթացքը ընթացքի մեջ է: Գյումրու կոնտրոնում գնահատվել են 510 աշակերտ՝ 27 դպրոց:

- ՀՀ Կենտրոնական բանկը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ 2019 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին անցկացրել է «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվել են «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաները դասավանդող 124 ուսուցիչների վերապատրաստումներ: Վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ:
- Կրթական որակի բարելավման գործում առանձնահատուկ դեր ունեն նախակրթարանները: Մարզում գործում են համայնքային 54 մանկապարտեզներ և 64 դպրոցահեն նախակրթարաններ:
- 2019 թվականին ՀՀ Շիրակի մարզի 118 դպրոցներում սկսել են գործել Արմաթ ինժեներական լաբորատորիաները՝ որոնք կընդգրկեն 33 աշակերտից ավել բոլոր դպրոցներում: Վերանորոգվել են համակարգչային դասարաններ, որոշ դպրոցներ համալրվել են նաև տեխնոլոգիական այլ գույքով :
- ԲՈՒՀ – երի ընդունելություն՝ 82.4%, հայտագրվել է՝ 884 դիմորդ, ընդունվել՝ 728: 9-րդ դասարանի հայոց լեզու առարկայի քննությանը մասնակցել են 2493 աշակերտ՝ միջին միավորը 12,21:
- Կադրային ապահովվածության խնդիրը գյուղական համայնքներում լուծվում է «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական ծրագրի և Շիրակի մարզի զբաղվածության կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերի միջոցով: 2019 թվականի ընթացքում կայացել է 25 ուսումնական հաստատության ղեկավարի թափուր տեղի համար հայտարարված մրցույթ, դեռ 8 տեղ թափուր են:
- Յուրաքանչյուր տարի 7-13 տարեկան շուրջ 585 աշակերտ՝ Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և բազմազավակ ընտանիքների, մեկնում են Հանքավանի ճամբարներ ամառային հանգստի, այս տարին էլ բացառություն չէ:
- Սնունդ ծրագիր՝ մարզի թվով **138** դպրոց իրականացնում է «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագիրը, այս տարում ևս **4** դպրոցներում՝ «Արդենիսի հիմնական դպրոց», «Աղվորիկի հիմնական դպրոց», «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում, որտեղ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում անհնար է տրամադրել տաք սնունդ, տրամադրվելու է չոր սնունդ, ՀՀ կառավարության 2013 թ.-ի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման Հավելված N 1-ի Աղյուսակ 1-ում ներկայացված նախաճաշի տարբերակներից որևէ մեկը կիրառելու պայմանով:

• *Ջեռուցում.* Վերջին երեք տարիների ընթացքում մարզային ենթակայության որոշ հանրակրթական դպրոցների շենքային պայմանները և ջեռուցման համակարգերը ենթարկվել են անհրաժեշտ վերանորոգումների՝ 2019 թվականի տվյալներով փաստացի գազիֆիկացվում են՝ **78** դպրոց: Էլեկրտրաէներգիայով ջեռուցվող դպրոցներ՝ **30,** հեղուկ վառարանով ջեռուցվող դպրոցներ՝ **7**, հեղուկ վառարան + էլեկտրաէներգիա՝ **15** դպրոց, դիզ. Վառելիքով կենտրոնացված ՝ **16** դպրոց:

Տնակային պայմաններում՝ դասընթաց է կազմակերպվում մարզի ընդամենը 1 դպրոցում՝ Ջաջուռ կայարանի տարրական դպրոց:

• *Հորային զուգարան:* Մարզի թվով 16 դպրոցներ դեռ չունեն կոյուղագծեր և օգտվում են հորային զուգարաններից:

• Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի հիմնանորոգման, վերանորոգման, մարզադահլիճների (61 դպրոցում ընդհանրապես չկա մարզադահլիճներ, իսկ 58-ը՝ անհրաժեշտություն ունեն առաջնային վերանորոգման), և մարզահրապարակների կառուցման, վերականգնման և նորոգման աշխատանքների կազմակերպում:

• Խորհրդի կազմի փոփոխություն՝ 78 դպրոցներում ԿԽ-ները չեն համալրվու ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից նշանակվող անդամի բացակայության պատճառով, 44 դպրոցներում գործում են 5 անդամից կազմված ԿԽ-ներ:

<u>Ուղղությունը մշակույթ</u>

ՀՀ Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2019 թվականի առաջին կիսամյակին իրականացված ծրագրերը նպատակ են ունեցել բարձրացնելու մշակույթի դերն ու պահպանելու ազգային մշակութային արժեքները:

Հաշվետու ժամանակահատվածում /01.01.2019-17.12.2019/ *իրականացվել է* պետական մշակութային քաղաքականությունը ՀՀ Շիրակի մարզում, մարզպետի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը, դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը:

Համակարգվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող 5 /«Գյումրու ժող. գործիքների նվագախումբ», «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ», «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան», «Շիրակի երկրագիտական թանգարան» և «Ամասիայի մանկական արվեստի դպրոց»/ մշակութային հաստատությունների գործունեությունը, ինչպես նաև *իրականացվել են* պետական, ազգային և այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Իրականացվել են մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ օրենքով սահմանված լիազորություններ, մշակույթի բնագավառում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստ, Սպանդարյան և Հայրենյաց համայնքներում:

Վերահսկողություն է իրականացվել ՝

- Մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, *միջոցներ ձեռնարկվել*

մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ:

- Գեղարվեստական կրթության որակի բարձրացմանը, ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցման գծով վարձավճարների փոխհատուցման աշխատանքների վերահսկմանը /«Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման» պետական ծրագրում ընդգրկված 19 երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող թվով 377 աշակերտներ ստացել են ուսման վարձավճարի փոխհատուցում:

2019 թվականի ընթացքում մարզում առանձնահատուկ հանդիսավորությամբ նշվել են ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի ծննդյան 150-ամյակները:

Տարվա ընթացքում պարբերաբար *աջակցություն է ցուցաբերվել* պետական ծրագրերով նախատեսված միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպմանն ու անցկացմանը, հանրապետական եզրափակիչ փուլերին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովմանը:

2019 թվականի մարտի 1-23-ը ՀՀ Շիրակի մարզում կազմակերպվել և անց են կացվել ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված «Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 12-րդ մրցույթ-փառատոն»-ի տարածաշրջանային փուլերը, ընտրվել մարզային փուլի մասնակից 40 աշակերտ՝ 20-ը 11-14, 20-ը 15-17 տարիքային խմբերից:

Գյումրու «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ում ապրիլի 18-ին Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակներում անց են կացվել «Գյուղական լանդշաֆտներ» խորագրին համահունչ միջոցառումներ:

Ապրիլի 30-ին կազմակերպվել և անց է կացվել «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական 10-րդ հոբելյանական մրցույթի Շիրակի մարզային փուլը, որին մասնակցել են մազում գործող 8 երգչախումբ, որոնցից 4-ը ճանաչվել են հաղթող և մայիսի 4-5-ը մասնակցել փառատոնի հանրապետական փուլին, մայիսի 12-ին կայացել է փառատոնի գալա համերգը, որտեղ էլ Գյումրու Հայորդյաց տան երգչախումբը ճանաչվել է հաղթող:

Մայիսի 3-ին «Զվարթնոց» խորագրով «Հայ դասական, ժողովրդական, հոգևոր երգի պահպանում ու տարածում» ծրագրի Շիրակի մարզային փուլը, որին մասնակցել են մարզի գրեթե բոլոր համայնքների ներկայացուցիչները, հաղթողները մայիսի 18-ին մանսնակցեցին մարզային փուլին, որից հետո լավագույնը ճանաչված մասնակիցները մասնակցել են փառատոնի եզրափակիչ փուլին:

Աջակցություն է ցուցաբերվել Ռուսաստանաբնակ հայ համայնքի ներկայացուցիչներին և «Հայկական աջակցության թիմի» մայիսի 11-ին Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում կայացած համերգի անցկացմանը:

Մայիսի 18-ին ՀՀ Շիրակի մարզի թանգարաններում «Թանգարանների միջազգային օր» և «Թանգարանների գիշեր» ակցիայի շրջանակներում «Թանգարանները որպես մշակութային հանգույցներ. ավանդույթի ապագան» խորագրի ներքո կազմակերպվել և անց են կացվել մի շարք միջոցառումներ:

Մայիս-հունիս ամիսներին «Գյումրու Ն. Տիգրանյանի անվան արվեստի դպրոց»-ը մասնակցել է «Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր-դպրոցներ» ծրագրին, որը մշակութային կրթության ոլորտում փոխգործակցության, համատեղ ստեղծագործական աշխատանքի, գործնական հմտությունների ձեռքբերման, ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման, փորձի փոխանակման կարևոր հարթակ ստեղծող և դրա գործունեությունն ապահովող նախագիծ է:

Նախագծի շրջանակներում հունիս 12-ին Երևանի «Ս. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոցը» համերգային ծրագրով հանդես է եկել «Գյումրու Ն. Տիգրանյանի անվան արվեստի դպրոցում», իսկ «Գյումրու Ն. Տիգրանյանի անվան արվեստի դպրոց»-ը՝ հունիսի 18-ին Երևանի «Ս. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոցում»:

Հուլիսի 5-ին Գյումրիում ու Երևանում անց են կացվել ՀՀ սահմանադրության օրվան և պետական խորհրդանիշերի հանրահռչակմանը նվիրված միջոցառումներ՝ տոնական քայլերթ և համերգ, որին մասնակցել են մարզի ԲՈՒՀԵ-երի ուսանողները:

Օգոստոսի 11-ին Դեպի Հայք հիմնադրամի շրջանավարտ Ալին Դեմիրճյանի կողմից Հայաստանի և Արցախի մարզերում անցկացված «Մեկ մարզ, մեկ երգ» ծրագրի միջոցով Հայաստան-Արցախ-Սփյուռք մշակութային կապերի ընդլայնման և ամրապնդման նպատակով ՀՀ Շիրակի մարզպետարանը աջակցել է նկարահանող խմբի անդամների կեցությունն ապահովելուն, ինչպես նաև նկարահանումների համար տեխնիկական-կազմակերպչական հարցերում:

Սեպտեմբերի 13-ին մարզի դպրոցականներն մասնակցել են «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված ամենամյա էպոսասացության մրցույթին, մարզային փուլում հաղթող ճամաչվածները հոկտեմբերի 5-ին ՀՀ Արագածոտնի մարզի Օշական գյուղում մասնակցել են մրցույթի եզրափակիչ փուլին՝ էպոսից ներկայացնելով տարբեր հատվածներ: Լավագույն էպոսասացների համար սահմանվել են հատուկ մրցանակներ, մասնակիցներին տրվել պատվոգրեր:

Սեպտեմբերի 17-ին Գյումրու Ստ. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնը Դսեղում Հովհ. Թումանյանի «Սուտլիկ որսկանը» ներկայացմամբ մասնակցել է Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների 14-րդ միջազգային ամենամյա փառատոնին:

Սեպտեմբերի 21-ին մարզում կազմակերպվել և մեծ շուքով անց են կացվել ՀՀ Անկախության տոնին նվիրված համապետական միջոցառումների շարքում ընդգրկված բազում միջոցառումներ:

2019 թվականին շարունակվել է դեռևս 2018 թվականի նոյեմբերին մեկնարկած դպրոցական բաժանորդային ծրագրը, որին մասնակցել և հավուր պատշաճի ծառայություններ է մատուցել ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը», ինչպես նաև 2019-ից ծրագրում ընդգրկվել են ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող «Գյումրու ժող. գործիքների նվագախումբը» և «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը»:

Սեպտեմբերի 28-29-ը ՀՀ Շիրակի մարզի մշակութային օջախները միացել են «Արվեստ և ժամանց» համաեվրոպական խորագրի ներքո Հայաստանի Հանրապետությունում անցկացված Եվրոպական ժառանգության օրերի միջոցառումների շարքին:

Մարզի տարբեր հաստատություններում գործող թատերախմբերը մասնակցել են «Նռան հատիկ-2019» հանրապետական մանկապատանեկան թատերական 19-րդ փառատոնին: Փառատոնի նախընտրական փուլի արդյունքում եզրափակիչ փուլ են անցել Արթիկ համայնքի Տ.Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոնի «Մանկական օրինակելի թատրոն» և Գյումրու Հայորդյաց տան «Հովհաննես Զարիֆյան» թատրոն-ստուդիայի թատերախմբերը, որոնք հոկտեմբերի 28-ին Երևանի «Մետրո» թատրոնում մասնակցել են փառատոնի հանրապետական փուլին՝ գրավել մրցանակային տեղեր:

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Գյումրու Ա. Շիշյանի անվան երաժշտական դպրոց»-ը մասնակցել է «Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր-դպրոցներ» ծրագիրի երկրորդ փուլին: Նախագծի շրջանակներում նոյեմբերի 16-ին Երևանի «Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոց»-ը համերգային ծրագրով հանդես է եկել «Գյումրու Ա. Շիշյանի անվան երաժշտական

դպրոց»-ում, իսկ «Գյումրու Ա. Շիշյանի անվան երաժշտական դպրոց»-ը՝ նոյեմբերի 30-ին Երևանի «Ս. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոցում»:

Ծրագրի մարզային այցելության ընթացքում անց են կացվել համատեղ դասեր, վարպետության դասեր, ինչպես նաև այցելություն մարզի որևէ տեսարժան կամ պատմամշակութային վայր:

Ծրագրի երևանյան այցելության ընթացքում կազմակերպվել է համերգ, համատեղ դասեր և այցելություն երևանյան որևէ մշակութային օջախ:

Հոկտեմբերի 21-ին մարզի երաժշտական և արվեստի դպրոցները մասնակցել են ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների շնորհալի երեխաների ստեղծագործական ներուժը զարգացնելուն միտված երաժշտական գործիքների տրամադրման «Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրի մրցույթին:

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին իրականացվել է 3 միջոցառում՝

1. 2019 թվականի մայիսի 30-ին Հառիճի վանական համալիրի տարածքում կազմակերպվել և մեծ շուքով անց է կացվել «Հոգևոր երգերի մարզային 6-րդ փառատոն» մշակութային միջոցառումը՝ մասնակցությամբ մարզում գործող և հրավիրված երգչախմբերի:
2. 2019 թվականի օգոստոսի 28-31-ը ՀՀ Շիրակի մարզի Թորոսգյուղ բնակավայրում կազմակերպվել և անց է կացվել «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների 8-րդ պլեներ մշակութային միջոցառումը՝ մասնակցությամբ ՀՀ մարզերի, մայրաքաղաք Երևանի և Վրաստանի Սամցխե-Ջավախք մարզի Նինոծմինդայի շրջանի Գանձա գյուղի երիտասարդ նկարիչների:
3. «Անկախության օր» միջոցառման անցկացման համար հայտարարված մրցույթին դիմող չլինելու պատճառով միջոցառում չի պատվիրվել:
4. 2019 թվականի դեկտեմբերի 14-ին կազմակերպվել և անց է կացվել «Ազգային նվագարանների համերգ» մշակութային միջոցառումը՝ մասնակցությամբ Գյումրու ժող. գործիքների պետական նվագախմբի և Գյումրու երաժշտական և արվեստի դպրոցների ազգային նվագարանների բաժնում սովորող աշակերտների:

Գյումրու ժող. գործիքների նվագախմբի կողմից Գյումրիում մեծ շուքով իրականացվել են «Երգում է հայ կինոն», Գյումրի, Ազատան և Ամասիա համայնքներում՝ «Պահպանենք և փոխանցենք ազգային երաժշտությունը» ծրագրերը:

Պարբերաբար կազմակերպվել են երիտասարդության ոլորտում առկա զարգացումներին ու նախաձեռնություններին նվիրված բազմաբնույթ միջոցառումներ և քննարկումներ՝ դրանց մասնակիցը դարձնելով երիտասարդության հարցերով զբաղվող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Ֆիզկուլտուրայի և սպորտի ոլորտում իրականացված ծրագրերի վերաբերյալ

Տարածաշրջանային և մարզային մարզական միջոցառումների կազմակերպում.

Միջոցառման բովանդակություն	**Միջոցառում. քանակ**	**Մասնակից թիվ**
Տարածաշրջանային մրցումներ	61	5181
Մարզային մրցումներ	22	1263
ԸՆԴԱՄԵՆԸ	**83**	**6444**

Միջմարզային և հանրապետական մրցումներին մարզի հավաքական թիմերի մասնակցության ապահովում.

Միջոցառման բովանդակություն	Միջոցառում. քանակ	Մասնակից. թիվ	Մրցանակային տեղեր			
			1-ին	2-րդ	3-րդ	Ընդ.
Միջմարզային մրցումներ	12	125	6	5	1	12
Հանրապետական մրցումներ	36	355	8	10	6	24
ԸՆԴԱՄԵՆԸ	**48**	**480**	**14**	**15**	**7**	**36**

Մարզակառույցների շինարարական վերականգման աշխատանքներ իրականացված ՀՀ պետական բյուջեի միջոցներով.

1.Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի վերանորոգում,
2.Անուշավան համայնքի ֆուտբոլի դաշտի կառուցում,
3.Փոքր Մանթաշի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգում,
4.Փանիկի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգում,
5.Սարագյուղի հիմնական դպրոցի մարզադահլիճի վերանորոգում,
6.Կառնուտի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերանորոգում,

ՈԵՖԱ-ի, ՀՖՖ-ի միջոցներով և համայնքների համաֆինանսավորմամբ 42 մ x 22 մ չափերով արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտեր կառուցում մարզի 12 բնակավայրերում՝

1. Արթիկ **5.**Ախուրյան **9.** Մարալիկ
2.Պեմզաշեն **6.**Արևիկ **10.**Սառնաղբյուր
3.Փանիկ **7.**Ազատան **11.**Մարմաշեն
4.Փոքր Մանթաշ **8.**Երազգավորս **12.**Աշոցք

Մարզական և կրթական հաստատություններին մարզագույքով ապահովում
Մարզում գործող 13 մարզադպրոցների և 37 հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական գույքային ծրագրով մարզագույքի հատկացում:

Զեկուցող՝ Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Լ. Մարտիրոսյան

2019 թվականին ՀՀ Շիրակի մարզպետարանի պատվիրատվությամբ գործում է թվով 27 ծրագիր, որը փաստացի կնքված պայմանագրերի հիման վրա ամբողջությամբ ֆինանսավորվել է, իսկ ըստ ոլորտների պետական բյուջեի պահուստային ֆոնդից տարվա ընթացքում հատկացված գումարները համաձայն կնքված պայմանագրերի ամբողջությամբ ֆինանսավորվել են, որոշ ծրագրեր դեռևս ընթացքի մեջ են:

2019 թվականի սեպտեմբերի 1-ից մարզի հանրակրթական դպրոցներում ապահովվել են մանկավարժների նվազագույն դրույքաչափերի 10% աշխատավարձերի բարձրացումները, իսկ մարզի առողջապահական կազմակերպություններում ապահովվել են բուժանձնակազմի աշխատավարձերի բարձրացումները:
ՀՀ Շիրակի մարզպետարանի ոլորտային, ապարատի պահպանման ծախսերի ՀՀ 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ներառյալ 2020թ. բյուջետային ֆինանսավորման) հայտերը սահմանված ժամկետներում կազմվել և ներկայացվել են լիազոր մարմին:

2019թ. դեկտեմբերի 17-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 88.2%-ով նախատեսված 2,705,136.2 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 2,386,843.8 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 318,292.4 հազ. դրամ:

Եկամուտների անվանումը	2019թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի հարկ	399,587.8	315,306.9	- 84,280.9	78.9
Գույքահարկ	1,031,761.1	924,040.7	- 107,724.4	89.6
Պետական տուրք	47,120.0	60,265.7	13,145.7	127.9
Տեղական տուրք	128,258.0	116,255.0	- 12,003.0	90.6
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	368,269.9	300,416.2	- 67,853.7	81.6
ա/ հողի վարձավճար	307,008.4	248,449.9	- 58,558.5	80.9
բ/ գույքի վարձավճար	61,261.5	51,966.4	- 9,295.1	84.8
Այլ եկամուտներ	730,135.4	670,559.2	- 59,576.2	91.8
Ընդամենը սեփական եկամուտներ	2,705,136.2	2,386,843.8	- 318,292.4	88.2

Մարզի քաղաքային համայնքները 2019թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 94.9%, **Արթիկ** քաղաքը՝ 87.5%:

ՀՀ պետական բյուջեով 2019 թվականին տասներկու ամիսներին նախատեսված 4,826,498.5 հազ. դրամ <<Դոտացիան>> ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա. Անտոնյան

❖ 2019 թվականին մարզի թվով <u>**17 համայնքների**</u> ***(Գեղանիստ, Հայկասար, Վարդաքար, Արթիկ, Արփի, Սարապատ, Լուսակերտ, Գետք, Բենիամին, Ամասիա, Սարատակ, Սպանդարյան, Փանիկ, Փոքր Մանթաշ, Երազգավորս, Լեռնակերտ, Հայրենյաց)*** տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն: Հսկողության արդյունքում արձանագրված թերությունների և խախտումների վերաբերյալ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անհամաձայնության դեպքեր չեն եղել:

❖ Մարզի թվով **7** համայնքներում նախապատրաստվել և անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, այդ թվում 5 համայնքներում **(Հառիճ, Անուշավան, Սպանդարյան, Փանիկ, Հայկավան)** հերթական, 2 համայնքում **(Աշոցք,**

Գետափ) արտահերթ ընտրություններ: 5 համայնքում՝ **(Հառիճ, Սպանդարյան, Անուշավան, Աշոցք, Գետափ)** համայնքի ղեկավարի, 3 համայնքում՝ **(Փանիկ, Հայկավան, Անուշավան)** ավագանու անդամների:

❖ Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են մարզին վերաբերող տարաբնույթ հարցեր: Մարզի խորհրդի նիստերը սահմանված կարգով արձանագրվել և ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

❖ 2019 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզպետարանում ստացվել է մարզի համայնքների ավագանիների թվով **1462** որոշում: Սահմանված ընթացակարգին համապատասխան մարզպետարանի կողմից ուսումնասիրվել է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, որի արդյունքում **860** որոշում **(58,9%)** եղել է իրավաչափ, իսկ **602 (41,2%)** ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին: ***/Հիշեցնել փոփոխված որոշումները մարզպետարան ուղարկելու մասին/***

❖ Համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի թվով **16** համայնքապետարաններում ***(Գյումրի, Մարմաշեն, Աշոցք, Ամասիա, Սարատակ, Հայկավան, Տուֆաշեն, Պեմզաշեն, Նոր Կյանք, Գեղանիստ, Առափի, Մեղրաշեն, Վարդաքար, Արփի, Սարալանջ և Արթիկ)*** առկա թվով 71 համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման համար հայտարարվել են մրցույթներ, ապահովվել է մրցույթների հայտարարությունների հրապարակայնությունը: Միջոցներ են ձեռնարկվել հայտարարված մրցույթների պատշաճ անցկացման ուղղությամբ: Հայտարարված մրցույթներից կայացել են **52-ը, թվով 19** մրցույթներ չեն կայացել դիմորդներ չլինելու պատճառով: Կայացած մրցույթների արդյունքում հաղթող է ճանաչվել **47** քաղաքացի, ովքեր սահմանված կարգով նշանակվել են համապատասխան պաշտոններում:

❖ Նախապատրաստվել և անցկացվել են մարզի **12** համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի թվով **21** համայնքային ծառայողների ատեստավորումներ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 05-Ն հրամանով սահմանված կարգի համաձայն վարչության կողմից պատշաճ կարգով վարվում է համայնքային ծառայողների միասնական էլեկտրոնային գրանցամատյան:

❖ Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների ղեկավարների, ավագանու անդամների և համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի կազմակերպման ուղղությամբ:

Վերապատրաստվել են մարզի **19** համայնքների ղեկավարներ, **56** ավագանու անդամներ և **40** համայնքային ծառայողներ:

❖ Շարունակվել են աշխատանքները համայնքներում առկա համացանցային պաշտոնական կայքերի պատշաճ գործարկումն ապահովելու և դրանց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը բարելավելու ուղղությամբ: Վարչության կողմից մշտադիտարկում է անցկացվել 3000 և ավելի բնակիչ ունեցող մարզի 10 համայնքներում՝ համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ու դրանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրումն ապահովելու ուղղությամբ:

❖ Աշխատանքներ են տարվել համայնքներում ավագանու նիստերի ու հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումների և տեսանյութերի պատշաճ որակի ապահովման ուղղությամբ, որի արդյունքում մարզի 10.000 և ավելի բնակչություն ունեցող թվով 5 համայնքներում **(Գյումրի, Արթիկ, Անի, Ախուրյան, Մարմաշեն)** ապահովված են առցանց հեռարձակումների պատշաճ որակը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

❖ ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի ռազմական ոստիկանության և ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում ապահովվել են 2018 թվականի ձմեռային և 2019 թվականի ամառային զորակոչի պատշաճ կազմակերպումն ու անցկացումը: 2018 թվականի ձմեռային զորակոչն ապահովվել է 101%-ով, 2019 թվականի ամառային զորակոչն ապահովվել է 111%-ով: 2019 թվականի հունվարի 29-ին, փետրվարի 5-ին, հուլիսի 4-ին, հուլիսի 30-ին, դեկտեմբերի 5-ին անցկացվել են ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստեր, քննարկվել են տարկետման ներկայացված թվով 267 զորակոչիկների անձնական գործեր:

ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի քննարկումների արդյունքում տրված եզրակացությունները սահմանված կարգով ու ժամկետներում ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

❖ Համապատասխան հսկողություն է սահմանվել այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող բանվորների կողմից կատարվող աշխատանքների և ծառայությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

❖ Զինվորական հաշվառման ընթացիկ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մարզի համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների համապատասխան աշխատակիցներին մշտապես ցուցաբերվել է մեթոդական աջակցություն:

❖ ՀՀ ՊՆ կողմից իրականացվող «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերն առավել ընդարձակ ներկայացնելու նպատակով հրավիրվել են ընդլայնված խորհրդակցություններ համայնքների ղեկավարների, մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների և զինղեկների մասնակցությամբ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

❖ Կազմվել են ոլորտի կարգավորմանն ուղղված թվով 10 որոշումների նախագծեր:

❖ Ընթացիկ տարում անցկացվել են երկու մեծամասշտաբ հրամանատարաշտաբային ուսումնավարժանքներ: 2019 թվականի մայիսի 30-31-ը ՀՀ Շիրակի մարզպետարանում և Գյումրու համայնքապետարանում անցկացվել է «ՈՒԺեղ երկրաշարժի դեպքում հետևանքների վերացում» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն, իսկ հոկտեմբերի 16-ից 17-ը ՀՀ Շիրակի մարզպետարանում և ՀՀ Շիրակի մարզի Բավրայի սահմանային անցակետում անցկացվել է «Աղետի կամ ռազմական գործողության ժամանակ միգրացիոն հոսքերի կառավարման գործողություններ» թեմայով համալիր ուսումնավարժությունը: Ուսումնավարժանքներին մասնակցել են պետական տարբեր կառույցների, ՀՀ ԱԻՆ ՓԾ, ՀՀ զինված ուժերի, Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամսի, ՄԱԿ-ի աղետների արձագանքման ազգային թիմի, Հայկական կարմիր խաչի ընկերության, ՀՀ Շիրակի մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները:

❖ Մարզի թվով 30 բնակավայրերում անցկացվել են «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավների սպառնալիքի դեպքում», «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում տարահանման կազմակերպում» և «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը երկրաշարժի դեպքում» թեմաներով շտաբային ուսումնավարժություններ:

❖ Կազմակերպվել է մարզի թվով 28 համայնքներում առկա չհաշվառված ազդարարման համակարգերը, որպես գույքային արժեք համայնքի հաշվեկշռում հաշվառելու աշխատանքները:

❖ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի

նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանով» նախատեսված միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ:

❖ Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամասի, ՌԴ 102-րդ ռազմաբազայի, մարզպետարանի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման ուղղությամբ:

2019 թվականի հունվարի 25-ին Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամասում ՀՀ Շիրակի մարզպետի անունից ՀՀ Շիրակի մարզի սահմանամերձ համայնքների թվով 10 բնակիչներ և սահմանապահ զորամասի ծառայողներ պարգևատրվել են շնորհակալագրերով և հուշանվերներով:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

❖ Քննարկվել և համապատասխան առաջարկություններ ու կարծիքներ են ներկայացվել մի շարք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

❖ Կատարվել է ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված, ինչպես նաև ՀՀ վարչապետին և պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված թվով **405 /335+70/** դիմումների քննարկում, ուսումնասիրություն և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

❖ Իրականացվել են թվով **4229 /3703+526/** տարաբնույթ հանձնարարականների ու գրությունների քննարկման, ամփոփման և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

Զեկուցող ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,Մովսես Մանուկյան

2019 թվականին մարզի գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում ցանված ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ պատկերը.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		ԱՃ կամ նվազում /+/-/ /հա/
		2018թ.	2019թ.	
1	Հացահատիկ	35613	33802	**-1811**
	որից՝ աշնանացան ցորեն	18458	15865	**-2593**
	գարնանացան	17018	17821	**+803**
4	Կարտոֆիլ	3220	3174	**-46**
5	Բանջարեղեն	1450	1374	**-76**
6	Կերային մշակաբույսեր	11686	10901	**-785**
7	Տեխնիկական մշակաբույսեր	105	72	**-33**
Ընդամենը		**52074**	**49323**	**-2751**

Մարզում փաստացի իրացվել է 33.705 տ գարնանացան գարու, 5.55 տ գարնանացան ցորենի, 55.949 տ կորնգանի, 0.35 տ եգիպտացորենի, 1.329 տ առվույտի, 0.42 տ ոլոռի և 0.05 տ սիսեռի սերմացուներ:

Բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2018-2019թթ. ունի հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Միջին բերք /գ/		Համախառն բերք /տ/		Աճ կամ նվազում /+/-/ /տոննա/
		2018թ.	2019թ. /սպասվող/	2018թ.	2019թ. /սպասվող/	
1.	Հացահատիկ	30.8	14.3	108600	43554.5	**-65045.5**
2.	Կարտոֆիլ	216.2	212.6	69600	67477.6	**-2122.4**
3.	Բանջարեղեն	216.8	168.9	31500	23201.2	**-8298.8**
4.	Պտուղ	82		5100	2368.3	
5.	Կերային	-		70200	69343.7	**-8563**

Հակակարկտային միջոցառումներ.

2019 թվականի ընթացքում մարզի 55 բնակավայրերում կարկտահարության և ցրտահարության հետևանքով վնասվել է շուրջ 9555 հա գյուղատնտեսական նշանակության հողտարածքներ, վնասի չափը կազմել է 4,48 մլրդ դրամ:

Մարզում 2019թ. ընթացքում տեղադրվել են 10 հակակարկտային կայանքներ՝ Բազրավան – 2, Ղարիբջանյան – 3, Վահրամաբերդ – 1, Շիրակ – 1, Փոքրաշեն – 1, Մեծ Սարիար – 1, Լեռնուտ - 1: Այժմ մարզի 35 բնակավայրերում գործում է 99 հակակարկտային կայանքներ:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրեր.

1. «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիր.
2. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր.
3. «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր.
4. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների «Տավարաբուծության զարգացման» ծրագիր.

5. «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիր.
6. «Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագիր.

Ոռոգում.

Օգտագործված ջրերի և գումարների հավաքագրումների օպերատիվ տվյալները 2018-2019թթ. (ըստ <<Շիրակ>> ՋՕԸ-ի)

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը		Չափի միավորը
		2018թ.	2019թ.	
1	Ջրառ	13878	35879.9	հազ. մ³
2	Ջրտուք	5993.8	10414.8	հազ. մ³
3	Հասույթ	65931.8	114563.2	հազ. դրամ
4	Գանձում	55965.6	109752.8	հազ. դրամ
5	Գանձման տոկոս	85	98	%

Ջրամբարների լցվածությունը 19.12.2019թ. դրությամբ՝

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 19.12.2018թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 19.12.2019թ. /մլն մ³/	Աճ/նվազում (+/-) /մլն մ³/
1	Ախուրյան	525	89.95	181.6	+91.65
2	Արփի լիճ	105	38.1	6.7	-31.4
3	Կառնուտ	22.6	6.99	5.77	-1.22
4	Սառնաղբյուր	4.8	0.30	0.37	+0.07
5	Վարդաքար	5	0.58	0.63	+0.05
6	Թավշուտ	6	0.25	0.25	0
7	Մանթաշ	8.2	2.25	2.46	+0.21
8	Ջաջուռ	0.28	0.17	0.17	+

Ընդամենը	**151.88**	**48.64**	**16.35**	**-32.29**

Լցվածությունը 19.12.2018-19.12.2019թթ. հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

Անասնապահություն.

Գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառման արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2018-2019թթ./.

	2018թ.	**2019թ.**	**Աճ/նվազում (+/-)**
Խ.ե.կ. /հազ. գլուխ/	91 091	86 964	**-4127**
Որից՝ կովեր /հազ. գլուխ/	44 326	40 799	**-3527**
Խոզեր /հազ. գլուխ/	14 670	20 222	**+5552**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	71 811	71 811	**0**

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> 2-րդ ծրագրի շրջանակներում Աղվորիկ բնակավայրում ավարտվել է արոտավայրերի ջրարբիացման համակարգի, փարախի և հովվի տան կառուցապատման աշխատանքները, ծախսվել է մոտ 46 մլն դրամ և ընդգրկում է շուրջ 1000 հա արոտավայր:

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2015-2016թթ. ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	**Համախառն արտադրանք**		**Աճ/վնազում +/-**
	2018թ.	**2019թ. /սպասվող/**	
Միս /հազ. տ/	24.9	24.3	**-0.6**
Կաթ /հազ. տ/	110.7	100.8	**-9.9**
Ձու /մլն հատ/	45.5	45.8	**+0.3**

ՀՀ Շիրակի մարզում 2019թ. գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ

2019 թվականին մարզի գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում ցանված ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ պատկերը.

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /+/-/ /հա/
		2018թ.	2019թ.	
1	Հացահատիկ	35613	33802	**-1811**
	որից՝ աշնանացան ցորեն	18458	15865	**-2593**
	գարնանացան	17018	17821	**+803**
4	Կարտոֆիլ	3220	3174	**-46**
5	Բանջարեղեն	1450	1374	**-76**
6	Կերային մշակաբույսեր	11686	10901	**-785**
7	Տեխնիկական մշակաբույսեր	105	72	**-33**
Ընդամենը		**52074**	**49323**	**-2751**

Մարզում փաստացի իրացվել է 33.705 տ գարնանացան գարու, 5.55 տ գարնանացան ցորենի, 55.949 տ կորնգանի, 0.35 տ եգիպտացորենի, 1.329 տ առվույտի, 0.42 տ ոլոռի և 0.05 տ սիսեռի սերմացուներ:

Բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2018-2019թթ. ունի հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Միջին բերք /g/		Համախառն բերք /տ/		Աճ կամ նվազում /+/-/ /տոննա/
		2018թ.	2019թ. /սպասվող/	2018թ.	2019թ. /սպասվող/	
1.	Հացահատիկ	30.8	14.3	108600	43554.5	**-65045.5**
2.	Կարտոֆիլ	216.2	212.6	69600	67477.6	**-2122.4**
3.	Բանջարեղեն	216.8	168.9	31500	23201.2	**-8298.8**
4.	Պտուղ	82		5100	2368.3	
5.	Կերային	-		70200	69343.7	**-8563**

Հակակարկտային միջոցառումներ.

2019 թվականի ընթացքում մարզի 55 բնակավայրերում կարկտահարության և ցրտահարության հետևանքով վնասվել է շուրջ 9555 հա գյուղատնտեսական նշանակության հողտարածքներ, վնասի չափը կազմել է 4,48 մլրդ դրամ:

Մարզում 2019թ. ընթացքում տեղադրվել են 10 հակակարկտային կայանքներ՝ Բագրավան – 2, Ղարիբջանյան – 3, Վահրամաբերդ – 1, Շիրակ – 1, Փոքրաշեն – 1, Մեծ

Սարիար – 1, Լեռնուտ - 1: Այժմ մարզի 35 բնակավայրերում գործում է 99 հակակարկտային կայանքներ:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրեր.

1. «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագիր.
2. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր.
3. «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր.
4. Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների «Տավարաբուծության զարգացման» ծրագիր.
5. «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիր.
6. «Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագիր.

Ոռոգում.

Օգտագործված ջրերի և գումարների հավաքագրումների օպերատիվ տվյալները 2018-2019թթ. (ըստ <<Շիրակ>> ՋՕԸ-ի)

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը		Չափի միավորը
		2018թ.	2019թ.	
1	**Ջրառ**	13878	35879.9	հազ. մ^3
2	**Ջրտուք**	5993.8	10414.8	հազ. մ^3
3	**Հասույթ**	65931.8	114563.2	հազ. դրամ
4	**Գանձում**	55965.6	109752.8	հազ. դրամ
5	**Գանձման տոկոս**	85	98	%

Ջրամբարների լցվածությունը 19.12.2019թ. դրությամբ՝

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ^3/	Լցվածությունը առ 19.12.2018թ. /մլն մ^3/	Լցվածությունը առ 19.12.2019թ. /մլն մ^3/	Աճ/նվազում (+/-) /մլն մ^3/
1	**Ախուրյան**	525	89.95	181.6	+91.65
2	**Արփի լիճ**	105	38.1	6.7	-31.4
3	**Կառնուտ**	22.6	6.99	5.77	-1.22
4	**Սառնաղբյուր**	4.8	0.30	0.37	+0.07

5	**Վարդաքար**	5	0.58	0.63	+0.05
6	**Թավշուտ**	6	0.25	0.25	0
7	**Մանթաշ**	8.2	2.25	2.46	+0.21
8	**Ձաջուռ**	0.28	0.17	0.17	+
Ընդամենը		**151.88**	**48.64**	**16.35**	**-32.29**

Լցվածությունը 19.12.2018-19.12.2019թթ. հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

Անասնապահություն.

Գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառման արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2018-2019թթ./.

	2018թ.	**2019թ.**	**Աճ/նվազում (+/-)**
Խ.ե.կ. /հազ. գլուխ/	91 091	86 964	**-4127**
Որից՝ կովեր /հազ. գլուխ/	44 326	40 799	**-3527**
Խոզեր /հազ. գլուխ/	14 670	20 222	**+5552**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	71 811	71 811	**0**

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> 2-րդ ծրագրի շրջանակներում Աղվորիկ բնակավայրում ավարտվել է արոտավայրերի ջրարբիացման համակարգի, փարախի և հովվի տան կառուցապատման աշխատանքները, ծախսվել է մոտ 46 մլն դրամ և ընդգրկում է շուրջ 1000 հա արոտավայր:

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2015-2016թթ. ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	**Համախառն արտադրանք**		**Աճ/վնազում +/-**
	2018թ.	**2019թ. /սպասվող/**	
Միս /հազ. տ/	24.9	24.3	**-0.6**
Կաթ /հազ. տ/	110.7	100.8	**-9.9**
Ձու /մլն հատ/	45.5	45.8	**+0.3**

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒՅԹՈՒՆ

Անցած մեկ տարվա ընթացքում զգալի աշխատանքներ են կատարվել Շիրակի մարզի շրջակա միջավայրի և նրա առանձին տարրերի բարելավման ուղղությամբ, որի

նպատակով մարզում իրականացվել և ընթացքի մեջ են էկոլոգիական իրավիճակի բարելավման մի քանի ծրագրեր:

Ավարտին է հասցվել «Հողերի էրոզիայի ինտեգրացված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիր շրջանակներում Շիրակի մարզի Սարալանջ, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ, Նահապետավան և Հառիճ համայնքներում անտառների հիմնման աշխատանքները, որի արդյունքնում նշված համայնքներում հիմնվել է 82.5 հա անտառ, իսկ բիոինժեներական միջոցառումներ են իրականացվել շուրջ 5 հա տարածքի վրա:

Մարզպետարանի աջակցությամբ մարզում «ԷՅ-ԹԻ-ՓԻ» բարեգործական հիմնադրամի «Հայաստան ծառատունկ» ծրագրի շրջանակներում իրականացվել և ընթացքի մեջ են համայնքային անտառների հիմնման աշխատանքները Գյումրի, Արթիկ, Ամասիա, Անի, Աշոցք, Մարմաշեն, Սարատակ, Հառիճ, Մեղրաշեն, Սարալանջ, Վարդաքար, Բենիամին համայնքներում, շուրջ 51 հա ընդհանուր մակերեսով:

Մարզում անցած մեկ տարվա ընթացքում զգալի աշխատանանքներ են իրականացվել կանաչ տարածքների ընդլայնման և ծառատնկման ուղղությամբ:

Մասնավորապես, Գյումրի քաղաքում գարնանային և աշնանային ծառատունկի շրջանակներում մարզպետարանի աջակցությամբ իրականացվել է մոտ 1600 ծառերի տնկիների, 8000 թփերի և 66500 ծաղկասածիլների տնկում: Կատարվել են քաղաքի 1.5 հա տարածքով այգիների, պուրակների ձևավորում և կանաչապատում:

Արթիկ քաղաքում մեկնարկել է լքված քարհանքերի տարածքում անտառաշերտերի ստեղծման և հեղեղատարների մաքրման պիլոտային ծրագիրը:

Ավարտին է մոտենում կենսավառելիքի /բրիկետների/ արտադրությոան հիմնման աշխատանքները Ախուրյան համայնքում:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող Լեյլի Ասլանյան

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործում են թվով 32 առողջապահական կազմակերպություններ, որոնցից 10-ը իրականացնում են հիվանդանոցային ծառայություններ, 19-ը ամբուլատոր պոլիկլինիկական: Մարզում գործում է նաև արյան փոխներարկման կայան, շտապ բուժական օգնության կայան, պաթոլոգանատոմիական լաբորատորիա:

Մարզպետարանի ենթակայությամբ գործող բուժհաստատություններում ծավալված է 576 մահճակալ:

2019 թվականի փետրվարի դրությամբ մարզի բուժաստատություններին տրամադրված պետական պատվերի բյուջեն կազմել է 4.521.194.0 հազ.դրամ, սեպտեմբերին կատարված վերահաշվարկից հետո կազմել է 4.807.279.4 հազ.դրամ, ինչը 2018 թվականի բյուջեի համեմատությանբ 900 մլն դրամով ավելի է /3.938.135.6 հազ.դրամ/:

2019 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 922106.7 հազ.դրամ, 2018 թվականի նույն ժամանակահատվածում կազմել է 802626.5 /ավելացել է 119480.2 հազ.դրամ /:

2019 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների դեբիտորական պարտքը կազմում է 75218.6 հազ.դրամ, իսկ

կրեդիտորական պարտքը՝ 364488.1 հազ.դրամ: 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ կրեդիտորական պարտքը նվազել է 60721.5 հազ.դրամով:

Բժշկական օգնությունը և սպասարկումը պատշաճ իրականացնելու նպատակով կազմակերպել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով, ինչպես նաև մարդասիրական օգնության ճանապարհով ձեռք բերված և մարզին հատկացված դեղորայքի ստացումը, բաշխումը մարզի բուժհաստատություններին:

Նույն նպատակով կազմակերպվել է ՀՀ առողջապահության նախարարությունից պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ բժշկական օգնության ու սպասարկման ուղեգրերի, ծննդօգնության պետական հավաստագրերի, երեխայի առողջության պետական հավաստագրերի, երեխայի առողջության անձնագրերի և անաշխատունակության թերթիկների ստացումը և բաշխումը մարզի բուժհաստատություններին:

Մարզի բժշկական հաստատություններին են ներկայացվել ՀՀ կառավարության որոշումները, ՀՀ առողջապահության նախարարի հրամանները և այլ իրավական ակտերի նախագծեր: Կազմակերպվել են առողջապահության ոլորտին առնչվող օրենսդրական և իրավական ակտերի պահանջների վերաբերյալ քննարկումներ բժշկական հաստատությունների տնօրենների հետ:

Մարզի ազգաբնակչության համար բժշկական օգնությունը և սպասարկումն առավել հասանելի և մատչելի դարձնելու համար ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող բժշկական հաստատություններում կազմակերպվել են «բաց դռների օրեր»:

2019 թվականի ընթացքում Վանաձոր «ԱՍԱՐ» առողջարանի ուղեգիր է տրամադրվել մարզի 15 հաշմանդամի: 18 երեխայի տրամադրվել է «Ջերմուկ-Արարատ» առողջարանի ուղեգիր:

Ուսումնասիրել, վերլուծել և համապատասխան ընթացք ենք տվել քաղաքացիներից ստացված մոտ 180 դիմումի:

ՀՀ քաղաքացի չհանդիսացող, սակայն ՀՀ-ում փաստացի բնակվող 37 քաղաքացու տրամադրվել է ուղեգիր ծննդօգնության հետ կապված ծառայությունները պետական պատվերի շրջանակում ստանալու նպատակով:

Հաշվի առնելով մարզի միջին բուժանձնակազմի սոցիալական վիճակը Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի հետբուհական շարունակական մասնագիտական զարգացման բաժնի հետ համատեղ կազմակերպվել է թվով 400 միջին բուժաշխատողի արտագնա վերապատրաստում:

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում կազմակերպվել է թվով 160 ընտանեկան բժշկի, մանկաբույժի և թերապևտի էլեկտրոնային առողջապահական համակարգի վերաբերյալ դասընթացներ:

Մասնակցել ենք մարզպետի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողությանը:

Ընթացքի մեջ են ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ 1425 – Ն» որոշման պահանջների համաձայն «Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի հակատուբերկուլոզային բաժանմունքի փակման աշխատանքները:

Սոցիալական ոլորտ

2019 թվականի ընթացքում սոցիալական ապահովութիան բաժինը իրականացրել է պետական նպաստների տրամադրման վերաբերյալ հաշվետվությունների վերլուծություն: Ամփոփվել է սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում հաշվառված և հարակից 14 բազաներում գրանցված անձանց տվյալների համադրման արդյունում կազմված ցուցակների կիրառման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

2019 թվականի դրությամբ մարզում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում 13499 ընտանիք ընդգրկվել է նպաստառու ընտանիքների ցուցակում: Վերլուծել և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ ենք տրամադրել 2018

թվականի ընթացքում ավել վճարված նպաստների հետգանձումների վերաբերյալ տեղեկատվությունները:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված թվով 15988 աշխատանք փնտրող և 11886 գործազուրկից տարվա ընթացքում աշխատանքի է տեղավորվել 1502 մարդ:

Նշված ժամանակահատվածում թվով 364 անձ օգտվել է ԽՍՀՄ խնայբանկում մինչև 1993թ. ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման ծրագրից:

Համակարգել ենք հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման, ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության և այլ ծրագրերով նախատեսված աշխատանքները: Մասնակցել ենք տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված Գյումրու համայնքապետարանի Գյումրի 1 և Գյումրի 2 սոցիալական աջակցության տարածքային բաժինների համակարգող խորհուրդների աշխատանքներին: Համակարգել ենք զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի շրջանակներում իրականացված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագիրը, արդյունքում մարզի 7 համայնքում (12 բնակավայր) իրականացվել է 14 ծրագիր: Ծրագրերում ընդգրկվել է 97 գործազուրկ: Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման արդյունքում ապահովվել է ծրագրում ընդգրկված մարզի գործազուրկների ժամանակավոր զբաղվածությունը: Զբաղվածության աջակցության պետական ծրագրերի շրջանակներում աջակցել և համակարգել ենք անասնապահությամբ զբաղվող նպաստառու ընտանիքների ընտրության գործընթացը: Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի թվով 10 համայնքներում մասնակցել ենք մարզպետի կողմից իրականացվող վարչական վերահսկողության աշխատանքներին: Աջակցել ենք մարզի համայնքներում բնակվող բնակարանի կարիք ունեցող փախստական ընտանիքների ցուցակների կազմման աշխատանքներին: Ուսումնասիրել, վերլուծել և համապատասխան ընթացք ենք տվել քաղաքացիներից ստացված մոտ 2500 դիմումի: Մասնակցել ենք Արտակարգ իրավիճակների նախարարության և Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպված հրամանատարային և ուսումնաշտաբային վարժանքներին: Մասնակցել ենք ինչպես մարզպետարանում, այնպես էլ հանրապետական գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարների, քննարկումների, խորհրդակցությունների:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին

մամարզային հողային պետական տեսչության պետ

Զորիկ Խաչատրյան

1. Իրավական և մասնագիտական հսկողություն

Մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու 2019 թվականի աշխատանքային ծրագրի և ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշումների համաձայն 2019 թվականի ընթացքում, ըստ եռամսյակների նախատեսված, ՀՀ Շիրակի մարզի թվով 17 համայնքներից նույնքանում իրականացվել են հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն:

Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման, օգտագործման տրամադրման, հողային ֆոնդի նպատակային օգտագործման և վարձավճարների գանձման օրինականությունը, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանումը:

Վերահսկողության արդյունքում կազմվել են 17 արձանագրություններ, որոնք համայնքների ղեկավարների կողմից ընդունվել են ամբողջությամբ և վերահսկողություն

իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Իրավական և մասնագիտական հսկողություն արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները քննարկվել են համապատասխան համայնքների ավագանիների նիստերում և արված միջնորդությունների և համայնքների ղեկավարներին տրված պատադիր կատարման ցուցումներին համապատասխան նախատեսված ժամկետներում վերացվել են արձանագրված թերություններն ու խախտումները:

2. Մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների իրավաչափության ուսումնասիրություններ

Սահմանված կարգով ուսումնասիրվել են մարզպետարան ստացված հողային հարաբերությունների բնագավառին վերաբերվող համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին:

Ներկայացված առարկությունները քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, դրանք ընդունվել են ամբողջությամբ և իրավական ակտերը համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության հողային օրենսդրության պահանջներին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, նախորդ տարիների համեմատությամբ էականորեն նվազել են մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ոչ իրավաչափ որոշումների տեսակարար կշիռը:

3. Հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 656 որոշմամբ սահմանված կարգով ուսումնասիրվել են 01.07.2019 թ. դրությամբ մարզի համայնքների կողմից կազմված հողային հաշվեկշիռները, դրանց ամփոփման արդյունքում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ և սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ անշրժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Վերջինիս կողմից մարզի հողային հաշվեկշռի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

Ըստ 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմվող մարզի հողային հաշվեկշռի, մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի կազմում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական նշանակության հողերը նվազել է ընդամենը 4.93 հեկտարով, որը պայմանավորված է եղել նորակառույց Բավրայի մաքսակետի պահպանման ու սպասարկման համար նախատեսված **4.39** հա հողամասը հատուկ նշանակության հողերի կատեգորիա տեղափոխելու, իսկ մնացած 0.54 հեկտարը գյուղատնտեսական արտադրական և կապի հողերի կատեգորի տեղապոխելու հետ:

4. Հողերի օտարում, վարձակալության տրամադրում

2019 թվականի 11 ամիսների ընթացքում մարզի թվով 13 համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում օտարվել է ընդամենը 63.25 հա համայնքային սեփականություն հանդիսացող հող, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 33.66 հեկտարով: Վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է 136 մլն 082 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 41 մլն

655 հազ. դրամով: Ապահովվել է ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի նկատմամբ բարձր մակարդակ: Իսկ ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, օտարվել է 3.35 հա հող՝ 23 մլն 708 հազ. դրամ արժեքով:

2019 թվականին 11 ամիսներին մարզի թվով 14 համայնքներում անցկացված հողերի վարձակալության տրամադրման մրցույթների արդյունքում վարձակալության է տրամադրվել 588.07 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողեր՝ 10 մլն. 482 հազ. դրամ վարձավճարով: Ապահովել է օգտագործման տրամադրված հողամասերի հողի հարկի դրույքաչափի նկատմամբ վարձավճարի բարձր մակարդակ:

Ապահովել է օտարված և վարձակալության տրամադրված հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումները:

4. Մարզի համայնքների վարչական տարածքներում առկա համայնքային և պետական սեփականությու հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալությունն

2019 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների վարչական տարածքներում առկա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող **137 574.2** հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված **49 133.8** հեկտար (**35.7 %)՝ 306 մլն 482 հազ. դրամ տարեկան վարձավճարով**: Վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության 1 հա հողամասի միջին վարձավճարը մարզում կազմում է **6237** դրամ:

Համայնքների վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականության **105943.4** հա գյուղատնտեսական նշանակության հողերից օգտագործման է տրամադրված **31454.2** հեկտարը (**29.7 %),** իսկ պետական սեփականության **31630.7 հա** հողերից՝ **17668.0 հա-ը (55.8 %)**:

	Հողատեսքը	Ըստ հողային հաշվեկշռի (հա)	Համայնքային և պետական սեփականության հողեր			Համեմատությունը 2018 թ նկատմամբ	
			Տրամադրված է օգտագործման (հա)	Տեսակարար կշիռը հողերի կազմում (%)	Տրամադրված չէ օգտագործման (հա)	2018թ. տրամադրված օգտագործման (հա)	Տարբերությունը (-, +)
1	Վարելահող	18429.0	12812.5	69.5	5616.5	12303.7	+508.8
2	Խոտհարք	7232.05	4182.5	57.8	3049.5	4093.2	+89.3
3	Արոտ	111862.8	32090.4	28.7	79772.4	31015.7	+1074.7
Ընդամենը մարզում		137523.85	49085.4	35.7	88438.4	47412.6	+1672.8

2018 թվականի համեմատությամբ վարձակալության տրամադրված գյուղատնտեսական նշանակության հողերն ավելացել են **1672.8** հեկտարով, որի արդյունքում 2018 թվականի համեմատությամբ մարզի համայնքների բյուջեներում ամրագրված հողի վարձակալական վճարներից եկամուտներն ավելացել են **7 մլն. 505** հազ. դրամով (ավելացումը հիմնականում պայմանավորված է եղել՝ **508.8** հա վարելահողերի, **89.3** հա խոտհարկների և **1074.7** հա արոտների վարձակալության տրամադրմամբ): Վերջին 3 տարիներին նկավում է գյուղատնտեսական նշանակության հողերի վաձակալության տրամադրման դինամիկ աճ **(15.3 %):**

5. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ

Ընթացիկ տարում հաստատված գլխավոր հատակագիծ չունեցող մարզի թվով 16 համայնքների կողմից սահմանված կարգով կազմվել և ՀՀ Շիրակի մարզպետարան են ներկայացվել համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու նպատակով կազմված 19 ժամանակավոր սխեմաներ և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործեր, որոնք քննարկվել են **հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողովի** կողմից և դրական եզրակացություններով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու նպատակով կազմված և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված նշված 19 հողաշինարարական գործերից 11-ի վերաբերյալ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվել են դրական եզրակացություններ, իսկ մնացած 8-ի համաձայնեցման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: Ընթացիկ տարում Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն է ստացվել նաև 2018 թվականին ներկայացված 1 հողաշինարական գործի վերաբերյալ:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից դրական եզրակացություններ տրված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները սահմանված կարգով քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, հաստատվել են համապատասխան որոշումներով և ընթացք են տրվել կառուցապատման իրավունքների, ինքնակամ շինությունների օրինականացման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործառույթներին:

2019 թվականի ընթացքում մարզպետարանի կողմից Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողով ներկայացված հողաշինարարական գործերի վերաբերյալ բացասական եզրակացություն չի ստացվել**:**

<u>6. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան հանձնարարականներով՝</u>

1) ուսումնասիրվել և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզի համայնքներում ՀՀ հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի համապատասխան վերջին 10 տարվա ընթացքում քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանած գյուղատնտեսական նշանակության հողամասերից կամովին հրաժարված, սակայն համայնքային սեփականության իրավունքները չձևակերպված հողամասերի վերաբերյալ.

2) ՀՀ Շիրակի մարզում 2018 թվականին ֆիզիկական և իրավաբանական անձանց նախաձեռնությամբ իրենց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման պահին կադաստրային արժեքների առկա տարբերությունների համապատասխան համայնքների բյուջեներ մուտքագրված գումարների վերաբերյալ առ՝ 01.01.2019թ. դրությամբ.

3) ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 16-Ն որոշման համաձայն 2018 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի

օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման վերաբերյալ.

4) 2018 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոփոխության գործառույթների վերաբերյալ.

5) 2018 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունների արդյունքում իրականացված աշխատանքների վերաբերյալ.

6) 2018 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի վերաբերյալ.

7) 01.01.2019 թ. դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքներում քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ.

8) ՀՀ Շիրակի մարզի համայնքներում վարձակալությամբ տրված գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ առ 01.01.2019 թվականի դրությամբ:

9). ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի փետրվարի 22-ի N 01/16.1/1289-19 հանձնարարականի համաձայն, ուսումնասիրվել և համապատասխան առաջարկություն է ներկայացվել «Էյ Պի Էյչ Թեկ» («APH Tech») ընկերության կողմից քիմիական պարարտանյութի գործարան հիմնելու համար, ներկայացված չափորոշիչներին համապատասխան, հողամասերի և շինությունների վերաբերյալ:

10) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի հունվարի 22-ի թիվ N 01/15.2/388-19 հանձնարարականի համաձայն, ձեռնարկված համապատասխան միջոցների արդյունքում ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգի» համաձայն մարզի համայնքներում գյուղատնտեսական նշանակության 15.6086 հա ցածրարժեք հողատեսքերը փոխադրվել են բարձրարժեք հողատեսքերի՝ բազմամյա տնկարքների (մրգատու այգի, հատապտուղ) և համայնքների հողային հաշվեկշիռներում չգրանցված այգիները ամբողջապես ներառել են 2019 թվականի հողային հաշվեկշռում:

11) Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի տնօրենի 2019 թվականի հունիսի 26-ի N 1 գրության կապակցությամբ, ուսումնասիրվել և համապատասխան տեղեկատվություն է տրամադրվել արդյունաբերական մասշտաբի արևային կայաններ կառուցելու նպատակով ներկայացված չափորոշիչներին համապատասխան հողամասեր տրամադրելու և մարզի համայնքներում (բնակավայրերում) 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների վերաբերյալ:

12) ՀՀ Շիրակի մարզի Ազատան համայնքի կադաստրային քարտեզագրման ժամանակ թույլ տրված անճշտությունն ուղղելու համար, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1682-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (ելից՝ 01.04.2019թ. N 01 //02281-2019), որը ընդունվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ:

13) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ ՁԲ/ԱՌՄ2-2/1996-19 գրության կապակցությամբ, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման 5-րդ կետի 2-րդ

ենթակետի համաձայն «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրման» ծրագրի իրականացման համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է տրամադրվել տեղեկատվություն՝ ՀՀ Շիրակի մարզի լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ համայնքներում (բնակավայրերում) մինչև 3 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող այն հողօգտագործողների վերաբերյալ, որոնց ընտանիքի անդամներն ընդգրկված չեն գյուղատնտեսության ոլորտում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ իրականացվող պետական աջակցության ծրագրերում):

14) ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» N 572-Ն որոշման ընդունմամբ կանոնակարգվել է համայնքների վարչական սահմաններում օբյեկտների կառուցապատման ընթացքում լիցքի իրականացման նպատակով անհրաժեշտ հողագրունտի հանույթի տրամադրման հետ կապված հարաբերությունները, որը ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէր:

Միջոցներ են ձեռնարկվում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում մարզի տարածքում իրականացվող Մ1 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի վերակառուցման ճանապարհաշինարարական աշխատանքների կարիքների համար գրունտային լցանյութի օգտագործումը ՀՀ կառավարության նշված որոշման պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Ի դեպ, հողագրունտի տրամադրումը կատարվելու համապատասխան վճարի դիմաց, որի չափը որոշում է համայնքի ավագանին:

15) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի օգոստոսի 12-ի N 01/16.1/11180-19 հանձնարարականի համաձայն, չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներգրավելու գործընթացը խթանելու և անհրաժեշտ վերլուծություն կատարելու նպատակով ուսումնասիրվել և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը ՀՀ Շիրակի մարզի համայնքներում 10 և ավելի հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատարածք ունեցող հողօգտագործողների վերաբերյալ:

16) ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության գլխավոր քարտուղարի 2019 թվականի հուլիսի 9-ի N 5/22.2/51703-19 գրության կապակցությամբ ուսումնասիրվել և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզի տարածքում Հայաստանի «Էմերալդ ցանց»-ում ներառված՝ «Արփի լիճ», «Ձաջուռ», «Ախուրյանի ջրամբար», «Արագածի ալպյան» պոտենցիալ տարածքների հողերի նպատակային նշանակության և կարգավիճակի վերաբերյալ:

17) Սահմանված կարգով քննարկվել և համապատասխան առաջարկություններ են ներկայացվել ՀՀ Շիրակի մարզպետարան ստացված ՀՀ օրենքներում և ՀՀ կառավարության որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թվով 11 նախագծերի վերաբերյալ:

18) ՈՒսումնասիրվել և պատասխանվել են հողային հարաբերություններին վերաբերվող քաղաքացիների և իրավաբանական անձանց ՀՀ Շիրակի մարզպետարան ստացված թվով 29 դիմումների ու բողոքների:

19) Համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվել գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության տրամադրման գործընթացը ճիշտ պլանավորելու և վարձակալության մրցույթները առավել հրապարակային ու թափանցիկ իրականացնելու ուղղությամբ:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառքները և վարձակալության մրցույթները առավել թափանցիկ դարձնելու նպատակով համայնքների ղեկավարների կողմից մամուլով և զանգվածային

լրատվության այլ միջոցներով հրապարակված հայտարարությունները 2019 թվականի մարտ ամսից տեղադրվում են նաև մարզպետարանի կայքէջում:

Անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել Մեղրաշեն և Բենիամին համայնքներին, առաջին դեպքում գյուղատնտեսական նշանակության 34 կտոր վարելահողերի, իսկ երկրորդ դեպքում՝ բնակավայրերի նպատակային նշանակության 14 կտոր հողամասերի աճուրդ-վաճառքները նախապատրաստելու և անցկացնելու գործում:

20) Ամենօրյա աշխատանքներ են տարվել մարզի համայնքների բյուջեներին ամրագրված հողի և գույքի վարձակալական վճարների հավաքագրումն ապահովելու և համայնքների սեփական եկամուտների կատարման բարձր ցուցանիշ ապահովելու ուղղությամբ: Ս.թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ համայնքների բյուջեներում ամրագրված հողի և գույքի վարձակալական վճարների հավաքագրումը կազմել է 81.4 %:

21) Եկխոսության մեդիա կենտրոնում մասնակցել եմ «Շիրակի մարզի համայնքների սահմանների անճշտությունների» վերաբերյալ կազմակերպված հարցի քննարմանը և պարզաբանումներ եմ ներկայացրել առկա խնդիրների կարգավորման ՀՀ օրենսդրության վերաբերյալ:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Վահան Մարտիրոսյան

Ձեզ եմ ներկայացնում զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի կողմից 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

- Կազմել ենք **ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության 2019 թվականի գործունեության ծրագիրը**:
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից նախաձեռնված տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային հարթակում ներդրումային ծրագրեր տեղադրելու նպատակով մարզի գործարարների հետ համատեղ կազմվել է **26 ներդրումային ծրագրեր**:
- Իրականացվել է **Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության 2018 թվականի գործունեության ծրագրի(տարեկան) և 2019 թվականի գործունեության ծրագրի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների մոնիտորինգ**:
- 2019 թվականի հուլիսի 20-ին կայացած «Իմ քայլը հանուն Շիրակի» բիզնես համաժողովի շրջանակներում կազմվել և համաժողովին ներկայացվել է SS, արդյունաբերության, զբոսաշրջության, գյուղատնտեսության և մի շարք այլ ոլորտներին առնչվող **55 ներդրումային ծրագիր**: Այս ծրագրերը նույնպես տեղադրված են տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային հարթակում: Այս ծրագրերից՝ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում լոգիստիկ և արտադրական ազատ տնտեսական գոտի ստեղծելու նախագծին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց: Ծրագրի արժեքը կազմում է 24 մլրդ դրամ: Գյումրիում ազատ տնտեսական գոտի ստեղծելու մասնավոր նախաձեռնությունը նպատակ ունի սպասարկել էլեկտրոնային առևտրի լոգիստիկ պահեստները և արտահանմանն ուղղված արտադրական գործընթացները:

- Եվրոպական միության աջակցությամբ, Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիայի և Շիրակի մարզպետարանի նախաձեռնությամբ Աշոցք խոշորացված համայնքի Աշոցք բնակավայրում կառուցվել է դահուկային սպորտի կենտրոնը:
- Կատարվել է մարզի հյուրանոցային տնտեսությունների գույքագրում:
- «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին է ներկայացվել ուղևորատար երկաթուղային տրանսպորտի պայմանների բարելավման առաջարկությունների փաթեթ՝ դեպի Շիրակի մարզ ուղևորատար երկաթուղային տրանսպորտով զբոսաշրջիկների ներհոսքն ավելացնելու համար:
- Շիրակի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոնի հետ համատեղ կազմվել է Շիրակի մարզում գործող հյուրանոցների, հյուրատների և հանրային սննդի օբյեկտների էլեկտրոնային քարտեզը, որը տեղադրված է Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքէջում:
- Կատարվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների 2018 թվականի (տարեկան) և 2019 թվականների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ, դրանց գործունեության վերլուծություն և արդյունքների ամփոփում (մոնիթորինգ) և ներկայացվել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե:
- Կազմվել և ՀՀ Ֆինանսների նախարարություն է ներկայացվել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների 2018 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ 2019 թվականին ՀՀ պետակա բյուջե վճարվելիք շահաբաժինների վերաբերյալ հաշվետվական փաթեթները:
- Հաշվառվել, կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 2018 թվականի (տարեկան) և 2019 թվականի առաջին կիսամյակի համայնքների առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբեկտների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ ստանալու համար ՀՀ Շիրակի մարզի **25** համայնքների հետ համատեղ կազմված և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացված **49** ծրագրերի ամբողջական փաթեթները ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված սուբվենցիայի ծրագրերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ամբողջությամբ հաստատվել են: **Երկու** սուբվենցիոն ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները նախատեսված է սկսել 2020 թվականին: Հավանության արժանացած մնացած **47 սուբվենցիայի ծրագրերով նախատեսված աշխատանքները կամ մեքենասարքավորումների ձեռքբերումը իրականացվել են այս տարում: 47 ծրագրերից 21-ն արդեն ավարտվել են և պետության մասնաբաժնի վճարումը համայնքին նույնպես կատարվել է, 23 ծրագրերով նախատեսված շինարարական աշխատանքները կամ մեքենասարքավորումների մատակարարումները ավարտվել են, փաստաթղթերի հավաքագրման փուլում են, 3 ծրագրերի շինարարական աշխատանքները կամ մեքենասարքավորումների մատակարարումները դեռևս չեն ավարտվել և տեղափոխվել են 2020 թվական:** 47 սուբվենցիայի ծրագրերի ամբողջական արժեքը կազմում է **1,859 մլն. դրամ**, որից ՀՀ պետական բյուջեից տրամադրված սուբվենցիայի չափը կազմում է **953.7 մլն դրամ**:

Արդյունքում, սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի համայնքներում ունենք՝

- **12.85 կմ երկարությամբ նորոգված, խճապատված և ասֆալտապատված ճանապարհ,**
- **վերակառուցված 1.65 կմ երկարությամբ խմելու ջրի ջրամատակարարման համակարգ և 0,5 կմ երկարությամբ ջրահեռացման համակարգ,**
- **134 հա-ով ավելի ոռոգելի հողատարածքներ,**
- **Տեղադրված 1004 նոր լուսակիրներ,**
- **Վերակառուցված 5 մանկապարտեզ, որտեղ կարող են հաճախել շուրջ 400 երեխաներ,**
- **160 կվտ ընդհանուր հզորությամբ արևային ֆոտովոլտային կայաններ,**
- **1 պատմության թանգարան Գյումրի քաղաքում, 2 վերակառուցված և կահավորված մշակույթի տներ, 2 համայնքային կենտրոններ և 1 համայնքային ֆուտբոլի դաշտ,**
- **1126.6 քառ.մ մակերեսով 2 բազմաբնակարան շենքի վերանորոգված տանիքներ Մարմաշեն խոշորացված համայնքում,**
- **21 միավոր կումունալ տեխնիկա ու սարքավորումներ , 5 միավոր գյուղատնտեսական նշանակության տեխնիկա և 8 հատ հակակարկտային կայաններ:**